Արձանագրություն N 2

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» կարիքների համար՝ «**ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի մարզադպրոցի կառուցման**» շինարարական աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով **ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6-2 ծածկագրով** ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **«27» «մարտի» 2020թ.**

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի **բոլոր** անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Նիստը տեղի ունեցավ **2020 թվականի մարտի 24-27-ը:**

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հայկ Խաչատրյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

**ՕՐԱԿԱՐԳ**

Որոշվեց՝

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. **ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6-2** ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին
2. **ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6-2** ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին
3. **ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6-2** ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ և մասին
4. Մասնակիցներին տրված միավորների մասին
5. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակից/ներ/ որոշելու մասին
6. **ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6-2** ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

**1. ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6-2 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին**

Հանձնաժողովի նախագահ Հայկ Խաչատրյանը ներկայացրեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ համաձայն աղյուսակի՝

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Չափաբաժնի նախահաշվային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում՝ Արարատի մարզադպրոց | 5 200 000 |

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- **ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6-2** ծածկագրով ընթացակարգի հայտերը www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2020 թվականի մարտի 24-ին, ժամը 10:00-ին:**
- Հրավերում փոփոխություններ չեն իրականացվել են:
- Հայտերի վերաբերյալ պաշտոնական հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:
- **ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6-2** ծածկագրով ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակիցը/ները//.

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | էլ.փոստ |
|---|---|---|
| 1 | **Ինտերէներգիա ՍՊԸ** | ieinterenergia@gmail.com |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6-2 ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցը/ները/ հայտը/երը/ կազմել և ներկայացրել է/են/ **ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6-2** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.
- Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտում/երում/ առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտում/երում/ ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:
- **Ինտերէներգիա ՍՊԸ**-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ով ներկայացված պայմանագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ, այն պայմանագրերը, որոնք բովանդակությամբ հանդիսանում են նմանատիպ, ավարտվել են 2016 թվականին, իսկ մյուս պայմանագրերը իրենց բովանդակությամբ նմանատիպ չեն:

Որոշվեց՝

1. **Ինտերէներգիա ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտը «Աշխատանքային փորձ» որակավորման մասով գնահատել անբավարար և մերժել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3. ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6-2 ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ մասին**

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակցի/ների/ գնային առաջարկը/ները/՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| հ/հ | Չափաբաժնի անվանումը | Մասնակցի անվանումը - Ինտերէներգիա ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|
| | | Մասնակցի/ների/ կողմից ներկայացված գները | | |
| | | Արժեք (ինքնարժեք+շահույթ) | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| **1** | **Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում՝ Արարատի մարզադպրոց** | **5,150,000** | **-** | **5,150,000** |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Մասնակիցներին տրված միավորների մասին**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, որի հայտ գնահատվել է անբավար և մերժվել՝

Որոշվեց՝

1. Հարցը օրակարգից հանել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակից/ներ/ որոշելու մասին**

Որոշվեց՝

1. Հարցը օրակարգից հանել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

**6. ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/6-2 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին**

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝

Որոշվեց՝

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած:
2. Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

***Հանձնաժողովի նախագահ՝***

Հայկ Խաչատրյան ____________________

***անդամներ՝***

Ռուբեն Թերզյան ____________________

Արթուր Զարգարյան ____________________

Արթուր Սողոմոնյան ____________________

Արեգ Եղիյան ____________________

***քարտուղար՝***

Անի Բազեյան ____________________